

ԱԶԳԱՅԻՆ ԼՈՒՐԵՐ



ՓՈՒՌՈՒՄՆ ԳԱՍՏԵԱՅՍ

Տ Ե Ղ Ա Պ Ա Հ Ի Ս Ր Բ Ո Յ Ա Թ Ո Ռ Ո Յ Ն Է Ջ Մ Ի Ա Ծ Ն Ի

ՏԵԱՌՆ ԳՈՒԿԱՍՈՒ ՍՐԲԱԶԱՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻ.

Էջմիածնի սուրբ Աթոռը զրկուեցաւ այս տարի Ապրիլի 15-ին իւր արթուն պահապաններուն մէկէն, իւր զօրաւոր սիւներուն մէկէն, որ էր սրբազան Արքեպիսկոպոսն Ղուկաս: Բոլոր մեր ազգը մեծ ցաւով ու տրամուլթեամբ իմացաւ այս գոյժը, եւ սուրբ Էջմիածնի միաբաններուն ողբին ու սգոյն արձագանգը ամէն տեղի Հայերուն սրտէն լսուեցաւ. վասն զի յայտնի էին ամենուս այն պատկառելի եւ գերյարգոյ ծերունւոյն չքնաղ կատարելութիւնները, որոց գլխաւորներն էին իւր մեծահոգի վեհանախութիւնը, Էջմիածնայ վանքին ու միաբանութեան վրայ ունեցած եռանդուն սէրը, կառաւարչական գործոց մէջ ցուցուցած սակաւազիւտ խոհականութիւնը, բաց յայնմանէ ազգային եկեղեցական պատմութեան ներհուն հմտութիւնը, եւ մանաւանդ Էջմիածնայ սուրբ Աթոռոյն վերջի յիսուն տարուանս մէջ պատահած անցքերուն ականատես եւ ականջալուր հաւատարիմ վկայ լինելով, եւ անձամբ անոնց մէջ գտնուելով, կենդանի եւ ցանկալի յիշատակարան լինելը:

Ղուկաս սրբազանին վերջին հիւանդութիւնը ութը ամսոյ չափ տեւեց, եւ մեք այն միջոցին բարեբաղդ գտնուեցանք ընդունելու նորա արգարեւ նահապետական օրհնու-

թիւններն ու քաջալերական խրատոյսները: Աչքերնուս առջեւն է տակաւին այն պարթեւական ծերունւոյն վառվրուռն կերպարանքը՝ որ մահճին վրայ բաղմած, առ հարկի ջերմնատազնապ տկարութեանը, բայց սրտին կայտառութիւնը գէմքին վրայ պայծառ փայլելով, ամենազգաստ մտօք եւ խոհական խորհրդածութիւններով կիսօտէր մեր ազգին եւ եկեղեցւոյն եւ Էջմիածնայ սուրբ ուխտին անցեալ, ներկայ եւ ապագայ հանգամանացը վրայ, եւ կզմայլեցընէր զմեզ իւր հանճարեղ զրուցուածքին ու սուր եւ արգարացի դատողութեանցը վրայ...

Բայց հարկը կստիպէ զմեզ առ ժամս վերցընելու մեր աչքը առ երկնաբնակ հոգի այն ալեղարգ Դիտապետին մերոյ՝ որ արձակուեցաւ իխաղաղութիւն, եւ մեղի հետ ըրած խորհրդաւոր խօսակցութեանց գրեթէ շարայարութիւնը մտօք եւ սրտիւ իրմէ լսելու: Իսկ երկրաւոր կենցաղավարութեանը ստոյգ պատմութիւնը գիր անցընելու եւ մեր ընթերցողաց հաղորդելու համար՝ պէտք է սպասեմք նորա ամբողջ կենսագրութեանը իմիաբանից սրբոյ Էջմիածնի՝ որ խոստացած են մեզ զայն, որպէս զի Ղուկաս սրբազանին կենդանադրոյն հետ իմիասին հրատարակեմք ամսագրոյս մէջ:

ՓՈՓՈԽՈՒԹԻՒՆ ԱՆԳԱՄՈՅ ՍԻՆԷԼՈԳՈՍԻՆ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ.

Պաշտօնական լրագրոց հրատարակութեանէն իմացանք որ Ս. Էջմիածնայ Սիւնհոգոսին անգամայն մէջ այս փոփոխութիւններս եղեր են. արձակուեր են անգամութեան պաշտօնէն Զաւաթան Սարգիս Արքեպիսկոպոսը, Մակար Արքեպիսկոպոսը, Եղիազար

Արքեպիսկոպոսը եւ Սարգիս վարդապետը Տէր Գասպարեան, եւ նոցա տեղը դրուեր են անգամ ԅովհաննէս Եպիսկոպոս Ասլանեան, ԅովհաննէս Վարդապետ Արշարունի, Թադէոս Վարդապետ Զինական, Պօլոս Վարդապետ Տէր Մարգարեան եւ Գրիգոր Վարդ. Մուշեղեանց: